

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-30>

ՄԱՐԻԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Իրավագիտության մագիստրոս,  
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան*

MARIAM MANUKYAN

*Master of Law,  
Member of the RA Chamber of Advocates, Advocate*

МАРИАМ МАНУКЯН

*Магистр права,  
Член палаты адвокатов РА, адвокат*

**ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆՆ  
ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼԻՍ ՄԱՍ 2.**

**«ՍՏՈՐԱԴԱՍ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԹԵՐԻ ԿԱՄ ՍԽԱԼ  
ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ԿԱՄ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ»**

**JURISDICTION OF THE RA CIVIL COURT OF APPEAL IN THE  
EXERCISE OF ITS POWERS PART 2. “CHARACTERISTICS AND  
CRITERIA OF ASSESSMENT OF JUDICIAL ACTS OF THE LOWER COURT  
AS DEFECTIVE OR WRONGLY REASONED OR BASED”**

**ЮРИСДИКЦИЯ ГРАЖДАНСКОГО АПЕЛЛЯЦИОННОГО СУДА РА  
ПРИ ОСУЩЕСТВЛЕНИИ СВОИХ ПОЛНОМОЧИЙ: ЧАСТЬ 2.  
«КРИТЕРИИ И ОСОБЕННОСТИ ОЦЕНКИ НЕВЕРНОЙ,  
ИЛИ НЕДОСТАТОЧНОЙ, АРГУМЕНТИРОВАННОСТИ ИЛИ  
ОБОСНОВАННОСТИ СУДЕБНОГО АКТА НИЖЕСТОЯЩЕЙ СУДЕБНОЙ  
ИНСТАНЦИИ»**

**Ներածություն**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված եռաստիճան դատական

համակարգի առկայության պայմաններում դժվար է թերագնահատել վերաքննության ինստիտուտի և վերաքննիչ դատարանի տեղն ու դերն այդ համակարգում: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ որպես ՀՀ դատական համակարգի երկրորդ ատյանի, կարևորագույն խնդիրն է՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը, ինչպես նաև վերջինիս կողմից թույլ տրված դատական սխալների վերացումը:

**Սույն գիտական աշխատությամբ փորձ է արվում բացահայտել ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները և առաջարկել նոր չափանիշներ, որոնք առավել նպատակային/տեղային կլինեն յուրքանջյուր գործով:**

Ինչպես նաև այդ համատեքստում ներկայացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) հայեցողության շրջանակներն իր լիազորությունների ընտրության հարցում և պատասխանել հետևյալ հարցին՝ արդյո՞ք վերաքննիչ դատարանը օրենսդրական պարտականություն չունի և/կամ չպետք է ունենա սեփական լիազորության ընտրությունը հիմնավորելու առումով:

### Հիմնական հետազոտություն

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանվում են վերաքննիչ դատարանի կոնկրետ լիազորություններ<sup>1</sup>:

Մասնավորապես, վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանը 1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ վճիռը թողնելով անփոփոխ, կամ 2) այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած վճիռը թերի կամ սխալ է հիմնավորված կամ պատճառաբանված, վերաքննիչ դատարանը հիմնավորում կամ պատճառաբանում է անփոփոխ թողնված վճիռը:

Այսինքն, վերը նշված իրավանորմի շրջանակում ամրագրված են **վերաքննիչ դատարանի երկու ինքնուրույն, սակայն փոխկապակցված լիազորություններ**, այն է՝

- վերաքննիչ բողոքն անհիմն լինելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը,
- գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից այն լրացուցիչ պատճառաբանելու կամ հիմնավորելու լիազորությունը:

Պետք է նշել, որ վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորության կիրառման արդյունքում վերաքննիչ դատարանի մոտ առաջանում է իր **որոշումը հիմնավորելու պարտականություն**: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած կարծիքների համաձայն՝ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը կիրառելիս վերադաս դատարանը պարտավոր է իր որոշման մեջ մատնանշել այն հիմնավորումները և շարժառիթները, որոնց հիման վրա բողոքի փաստարկները ճանաչվում են չհիմնավորված և դատական ակտի բեկանման համար հիմք չհանդիսացող<sup>2</sup>:

<sup>1</sup> ՀՕ-110-Ն, Ընդունման ամսաթիվը՝ 09.02.2018 թ., Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 09.04.2018 թ., ինկորպորացիա՝ ԱԺ, 23.12.2022:

<sup>2</sup> Տե՛ս օրինակ Гражданское процессуальное право России / Под ред. П.В. Алексия, Н.Д. Амаглобели. - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, էջ 335; Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова. - М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:

**Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու կամ հիմնավորելու լիազորությունը.** անդրադառնալով հիշյալ լիազորության բնույթին՝ պետք է նշել, որ այն Վերաքննիչ դատարանի պարտադիր (ոչ հայեցողական) լիազորություն է: ՔԴՕ-ով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է պատճառաբանել/հիմնավորել ընդհանուր իրավասության դատարանի թերի կամ սխալ պատճառաբանված/հիմնավորված վճիռը: Այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող ճիշտ դատական ակտ, սակայն այն թերի կամ սխալ է պատճառաբանված կամ հիմնավորված, վերաքննիչ դատարանը **պարտավոր է** առաջին ատյանի դատարանի դատական ակտի պատճառաբանությունները/հիմնավորումները լրացնել նոր պատճառաբանություններով/հիմնավորումներով (եթե այդ ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված կամ հիմնավորված) կամ ճիշտ պատճառաբանություններով (եթե այդ ակտը սխալ է պատճառաբանված)<sup>3</sup>: Վերոգրյալին համապատասխան՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի գ. կետով սահմանվում է միայն վճռի պատճառաբանական մասի դեմ ներկայացվող բողոքների համար նախատեսված պետական տուրքը՝ դրան համապատասխան նախատեսելով Վերաքննիչ դատարանի հետևյալ լիազորություն՝ «բավարարում է վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին»:

Վերոնշյալ վերլուծության արդյունքում ևս մեկ իրավական հարց է առաջանում՝ **ինչպե՞ս է գնահատվում ստորադաս դատարանի դատական ակտի պատճառաբանվածության/հիմնավորվածության «մակարդակը», ինչպե՞ս է գնահատվում դատական ակտի «պատճառաբանված», «չպատճառաբանված», «թերի/ոչ պատշաճ պատճառաբանված» կամ «սխալ պատճառաբանված», «հիմնավորված», «չհիմնավորված», «թերի/ոչ պատշաճ հիմնավորված» կամ «սխալ հիմնավորված» լինելը:**

Վերոնշյալի համատեքստում հարկ է նախ հասկանալ՝ ի՞նչ է նշանակում դատական ակտի պատճառաբանում և դատական ակտի հիմնավորում:

**Այսպես՝ ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է՝**

2. Դատական ակտը պետք է լինի **հիմնավորված և պատճառաբանված**, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

**Համաձայն ՀՀ ՔԴՕ 8-րդ հոդվածի՝**

1. Դատական ակտը հիմնավորված է, եթե դրանում արտացոլված են այն կայացնելու համար **անհրաժեշտ և բավարար փաստական և իրավական հիմքերը:**

**Համաձայն ՀՀ ՔԴՕ 9-րդ հոդվածի՝**

1. Դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են **ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:**

2. Եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով, **ապա** դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված փաստարկները

<sup>3</sup> Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2012, թիվ 10 (159), էջ 36:

կամ իրավական հիմքերն առերևույթ սխալ են, կամ կիրառման է ենթակա հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ է փոխադրական ակտի կայացման համար:

3. **Դատական ակտը չի կարող պատճառաբանվել ենթադրություններով՝** բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքում ամրագրված կանխավարկածներով:

4. **Դատական ակտը չի կարող պատճառաբանվել վերացական դատողություններով:** Դատարանը չի կարող փաստել, որ գործին մասնակցող որևէ անձ չի կատարել որևէ փաստական հանգամանք ապացուցելու պարտականությունը՝ առանց ցույց տալու, թե փոխադրական հանգամանքն ինչ պատճառով չի կարող ապացուցված համարվել գործում առկա ապացույցներով:

5. Այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, ապա դատական ակտում պետք է պատճառաբանվի, **թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:**

**Համաձայն ՀՀ ՔԴՕ 66-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝**

1. Դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

2. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավաստության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:

3. Դատարանը հետազոտված ապացույցը ճանաչում է անարժանահավաստ, եթե դրա հետազոտման, գնահատման կամ այլ ապացույցների հետ համադրման արդյունքով հաստատվում է, որ դրանում պարունակվող տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանները գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատեն գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավաստության և բավարարության տեսանկյունից: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք վճիռներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների **չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը** դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ **դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ**՝ կողմերի լավագույն լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի

6-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի ներկայացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը, թե դատարանը պատշաճորեն կատարել է, արդյոք, դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո<sup>4</sup>:

**Դատական ակտի պատճառաբանվածությունը ՄԻԵԴ-ը դիտարկել է որպես արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքի պահանջ:** Այս պարտականությունը ներառում է առնվազն հստակ անդրադարձ այն հանգամանքներին և փաստարկներին, որոնք կարող են որոշիչ լինել տվյալ գործի համար<sup>5</sup>: Ավելին, այն գործերը, որոնք կարող են առնչվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներին, ՄԻԵԴ-ի մի շարք վճիռներով մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել նաև այն հարցը, թե որքանով են դատական ակտերում բերված պատճառաբանությունները եղել բովանդակալից, այլ ոչ՝ ձևական բնույթի (տես, *mutatis mutandis*, Պարադիսոն և Կամպանելլին ընդդեմ Իտալիայի գործով (*Paradiso and Campanelli v. Italy*) [ՄՊ], թիվ 25358/12, «210, 2017 թվականի հունվարի 24»)՝ դատական ակտի պատճառաբանվածության սկզբունքի պահպանված լինելու նկատմամբ իրականացնելով բովանդակային վերահսկողություն:

**Դատական ակտի պատճառաբանված լինելու կանոնը պահանջում է, որ դատական ակտը պետք է պարունակի լիարժեք տեղեկատվություն այն ապացույցների մասին, որոնք գնահատվել են, այն փաստերի մասին, որոնք հաստատվել են, ինչպես նաև այն իրավական նորմերի և միաժամանակ դրանց կիրառելի լինելու վերաբերյալ եզրահանգումների մասին, որոնք կիրառվել են:** Հաջորդիվ դատական ակտը պետք է արտացոլի դատարանի կողմից իրականացված այս երեք գործընթացների վերաբերյալ դատողությունների ընթացքը և այդ դատողություններից բխող եզրահանգումները:

**Վերոշարադրյալ իրավանորմերից և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության<sup>6</sup>:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը սահմանել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներով մեկնաբանել և օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման շրջանակներում դիրքորոշում է հայտնել դատական ակտի պատճառաբանվածության և հիմնավորվածության «գնահատման չափանիշների» վերաբերյալ:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորության երկրորդ բաղադրատարրի, այն է՝ «այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած վճիռը թերի կամ սխալ է հիմնավորված կամ պատճառաբանված, վերաքննիչ դատարանը հիմնավորում կամ պատճառաբանում է անփոփոխ թողնված վճիռը» վերաբերյալ դիրքորոշումների մեջ օգտագործել է «լրացուցիչ» տերմինը, ինչի հետ համաձայն ենք: Այսինքն, վերաքննիչ դատարանն

<sup>4</sup> Տես, օրինակ, Սալոմե ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզ ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ:

<sup>5</sup> Տես Ռուիզ Տորիան ընդդեմ Իսպանիայի գործը (*Ruiz Torija v. Spain*), 1994 թվականի դեկտեմբերի 9, «29-30, Շարք A թիվ 303-A), Հիգգինսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի գործը (*Higgins and Others v. France*), 1998 թվականի փետրվարի 19, «42-43, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1998-1):

<sup>6</sup> Տես ԲԴԽ-69-Ո-Կ-17 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ներսիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը:

ունի ստորադաս դատարանի դատական ակտը բացառապես լրացուցիչ պատճառաբանելու/ հիմնավորելու կամ սխալ պատճառաբանություններն ու հիմնավորումները ճշտելու լիազորություն և ոչ թե դատական ակտն ամբողջությամբ պատճառաբանել/հիմնավորելու պարտականություն: Այսպես,

Համաձայն ՀՀ ՔԴՕ 365-րդ հոդվածի 3-րդ մասի՝

3. Անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 365-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի՝

2. Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

9) դատական ակտը չունի պատճառաբանական մաս.

Ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը չի կարող պատճառաբանել ամբողջությամբ, քանի որ եթե ստորադաս դատարանի դատական ակտում բացակայում է պատճառաբանական մասը, ապա տվյալ վճիռը ենթակա է բեկանման և ոչ թե պատճառաբանման/հիմնավորման: Նորից ենք արձանագրում, որ ստորադաս դատարանի վճիռն, ըստ էության, ճիշտ եզրափակիչ մաս ունենալու դեպքում վերաքննիչ դատարանի կողմից պատճառաբանվում կամ հիմնավորվում է, եթե այն սխալ կամ թերի է պատճառաբանված/հիմնավորված, ոչ թե ընդհանրապես հիմնավորված/պատճառաբանված չէ:

Շատ հետարքրքրական է օրենսդրի օգտագործած ձևակերպումն այս մասով, այն է՝ «**դատական ակտը չունի պատճառաբանական մաս**»: **Կրկին հարց է առաջանում՝ նշված ձևակերպումը նշանակում է, որ դատական ակտը բացարձակապես չունի պատճառաբանական մաս, թե առկա է պատճառաբանական մաս, բայց այնքան չի համապատասխանում ՀՀ օրենսդրության դրույթներին, որ «գնահատվում է» բացակայող:**

Կարծում ենք՝ պետք է լայն մեկնաբանել և պատճառաբանական մասի բացակայություն դիտարկել նաև այն դեպքը, երբ դատական ակտը «գրեթե պատճառաբանված» չէ:

Գնահատման առակա է նաև «գրեթե չպատճառաբանված» դատական ակտ որակումը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պրակտիկան բազմազան է և հնարավոր չէ հստակ և որոշակի չափանիշներ ձևավորել վերոգրյալ մասով, կարծում ենք՝ «գրեթե չպատճառաբանված» են համարվում այն դատական ակտերը, որոնցից պարզ չէ դատարանի եզրահանգումների ընթացքը, այսինքն՝ ինչու է դատարանի եկել այս կամ այն եզրահանգման, համադրված չեն ապացույցներն ու գործով քննարկման ենթարկված փաստերը, ինչպես նաև փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի վերաբերյալ վերլուծությունն է թերի կամ բացարձակ բացակայում է, լիարժեք տեղեկատվություն չեն պարունակում այն ապացույցների մասին, որոնք գնահատվել են, այն փաստերի մասին, որոնք հաստատվել են:

Այսինքն, ընդհանրական առումով, կարծում ենք, որ դատական ակտը «գրեթե չպատճառաբանված» է, երբ անաչառ դիտորդի (դատական ակտին ծանոթացողի) մոտ չի ձևավորվում դատական ակտով դատարանի կողմից կատարված վերլուծության, դիրքորոշման և եզրահանգման ընթացքի վերաբերյալ որոշակիություն:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրական դատարանը դատական ակտի պատճառաբանական մասի վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ<sup>7</sup>»

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով արդար դատաքննության իրավուն-

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690, 2010 թվականի հունիսի 15-ի թիվ ՍԴՈ-896, 1 փետրվարի 2022 թ. թիվ ՍԴՈ- 1628 որոշումները:



քի բաղադրիչ հանդիսացող դատական ակտի պատճառաբանվածության պահանջի մասին նախկինում արտահայտված դիրքորոշումները, գտել է, որ *Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի սույն բաղադրիչը դատական քննության որակի առաջնային չափանիշ է, իսկ դատական ակտի պատճառաբանության բացակայությունը կասկածի փակ է առնում դատարանի կողմից տվյալ դատական ակտի կայացմամբ արդարադատության նպատակին համահունչ գործունեությունը:*

**Կոնկրետ գործով դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության գնահատման առաջնային չափանիշը**, անկախ դատական ակտի նկատմամբ ձևավորված հանրային կարծիքից կամ կողմերի կամ հասարակության կամ դրա մի մասի վերաբերմունքից, տվյալ գործով փաստերի և իրավունքի հարցերի վերաբերյալ **դատական ակտի հիմքում ընկած ողջամիտ և համոզիչ պատճառաբանությունն է:** Ավելին, դատավարական կողմերի մրցակցող և հակասող շահերի բախման պայմաններում ընթացող դատական վճեքում դատական ակտի պատճառաբանության բացակայությունը նման պատճառաբանության առկայության իրավական պահանջի պայմաններում կարող է սասանել կողմերի և հանրության վստահությունն առ այն, որ բացակայում են տվյալ դատական ակտը կանխորոշող այլ՝ արդարադատության նպատակների հետ չառնչվող պատճառներ:

**Քացի դրանից՝ դատական ակտի պատճառաբանվածությունը կողմի համար այն արդյունավետորեն բողոքարկելու և նման բողոքարկման հաջողության գնահատականի հիմք է:**

Միաժամանակ, դատական ակտի պատճառաբանվածության պահանջն ուղղված է դատարանների կողմից նույնանման գործերով ձևավորվող պրակտիկայի հստակ ուղենիշների ամրագրմանը, որի նպատակն է ապահովել իրավունքի մեկնաբանության և կիրառության կանխատեսելիությունը, բացառել կամայական որոշումների հավանականությունը՝ դատական ակտերի հիմքում ընկած պատճառաբանությունների հրապարակայնության պայմաններում բարձրացնելով դատարանների հաշվետվողականությունը:

Ի վերջո, վերը նշված բոլոր նկատառումներով հանդերձ, և քացի անհատի արդար դատաքննության սահմանադրական իրավունքից և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Կոնվենցիայի 6-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 2200 A (XXI) բանաձևով հաստատված միջազգային դաշնագրի 14-րդ հոդված) ստանձնած պարտավորության մաս լինելուց, **դատական ակտի պատճառաբանվածությունը նաև դատավորի մասնագիտական վարքագծին առաջադրվող և միջազգայնորեն ճանաչված սկզբունք է<sup>8</sup>:**

Պետք է փաստել նաև, որ սույն հարցին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ այդպիսով ևս մեկ անգամ հաստատելով դատական ակտի պատճառաբանված լինելու կարևորությունն ու անհրաժեշտությունը<sup>9</sup>: Մասնավորապես՝ նշելով՝ «(...) *Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է սրբեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության սրուզման համար:*

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմա-

<sup>8</sup> Տե՛ս ԵԴԽԻՆ Դատավորների մագնա կարտա (Հիմնարար սկզբունքներ), 17/11/2010 թ., կետ 16:

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0045/01/13 քրեական գործով 28.03.2014 թվականին կայացված որոշման 12-րդ կետը:

նափակում է վերադաս դատական արյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

Վերահաստատելով Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը մի շարք այլ որոշումներով ևս անդրադարձել է քննարկվող հարցին<sup>10</sup>:

**Եզրակացություն**

Վերոգրյալի համատեքստում հետևություն ենք անում, որ պրակտիկայում բավականին բարդ է դառնում «գնահատելը» դատական ակտի պատճառաբանված/հիմնավորված լինել/չլինելու կամ թերի/անթերի պատճառաբանված/հիմնավորված լինելու հանգամանքները: Եթե գործը փոքր-ինչ հեշտանում է դատական ակտի սխալ պատճառաբանված/հիմնավորված լինելու դեպքում (չնայած, այս դեպքում ևս իրավական գնահատումն էական և առանցքային նշանակություն ունի և դրանով իսկ՝ իր ուրույն բարդությունը), ապա վերոնշյալ դեպքերում բավականին խնդրահարույց է դառնում «գնահատումը»:

Ուստի, յուրաքանչյուր գործով դատարանը պետք է հստակ գնահատի՝ արդյոք ստորադաս դատարանի դատական ակտը պատշաճ կարգով պատճառաբանված և հիմնավորված է, թե՛ ոչ, իսկ անհրաժեշտության դեպքում, հիմնավորի և/կամ պատճառաբանի ստորադաս դատարանի դատական ակտը: Այս համատեքստում էականորեն բարձրանում է Վերաքննիչ դատարանի պրոֆեսիոնալ լինելու անհրաժեշտությունը: Ընդ որում՝ նման գնահատման հիման վրա Վերաքննիչ դատարանը պետք է ընտրի իր լիազորություններից կոնկրետ կիրառելին, ինչպես նաև դատական ակտում հիմնավորի դրա ընտրությունը, որպեսզի գործին մասնակցող անձանց համար որոշակի լինեն Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված լիազորության ընտրության հիմքերն ու հիմնավորումները:

**Ամփոփագիր:** Գիտական հետազոտության շրջանակում փորձ է արվում բացահայտել ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները և առաջարկել նոր չափանիշներ, որոնք առավել նպատակային/տեղային կլինեն յուրաքանչյուր գործով:

Ինչպես նաև այդ համատեքստում ներկայացնել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) հայեցողության շրջանակներն իր լիազորությունների ընտրության հարցում և պատասխանել հետևյալ հարցին՝ արդյո՞ք Վերաքննիչ դատարանը օրենսդրական պարտականություն չունի և/կամ չպետք է ունենա սեփական լիազորության ընտրությունը հիմնավորելու առումով:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է զարգացող իրավական պրակտիկայով, Վերաքննիչ դատարանի լիազորությունների բազմազանությամբ և դրանց բովանդակության խրթինությամբ:

**Սույն աշխատության հիմնական նպատակներն են՝**

- Համակարգային վերլուծության արդյունքում վեր հանել ՀՀ Վերաքննիչ դատարանի լիազորությունների ընտրության չափանիշներն ու դրանց առանձնահատկությունները,

<sup>10</sup> Տե՛ս Գևորգ Խնույանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը:



- Իրականացնել իրավական վերլուծություն՝ բացահայտելով ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները,
- Առաջարկել ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման նոր չափանիշներ, որոնք առավել նպատակային/տեղային կլինեն յուրքանայուր գործով:

- ՀՀ Օրենսդրության կոնկրետ հոդվածների լայն և նեղ մեկնաբանությունների ներկայացումը, դրանց բացահայտումն ու հիմնավորումը:

- Իրավական անորոշության հաղթահարմանն ուղղված մեկնաբանությունների վերհանումն ու հիմնավորումը:

#### **Գիտական աշխատության խնդիրներ են պատասխանել հետևյալ հարցերին՝**

1. Ո՞րոնք են ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները: Արդյո՞ք գոյություն ունեցող չափանիշները բավարար են նման գնահատում իրականացնելու համար:

2. Արդյո՞ք ՀՀ Վերաքննիչ դատարանի հայեցողությունը բացարձակ է ՀՀ ՔԴՕ սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա լիազորությունների ընտրության հարցում, այն պարագայում, երբ գործի փաստական հանգամանքների համատեքստում կարող է (առկա է իրավական հնարավորություն) կիրառվել կոնկրետ լիազորություն:

3. Արդյո՞ք ՀՀ Վերաքննիչ դատարանը չպետք է ունենա ՀՀ ՔԴՕ-ով սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա իր լիազորություններից կոնկրետ մեկի ընտրությունը պատճառաբանելու/հիմնավորելու օրենսդրական պարտականություն և/կամ արդյո՞ք ներկայումս ՀՀ Վերաքննիչ դատարանը չունի նման օրենսդրական պարտականություն:

**Annotation.** Within the framework of scientific research, an attempt is made to determine the existing criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or unfounded or justified, and to propose new criteria that will be more targeted/relevant in each specific case.

And also in this context, to present the scope of discretion of the RA Civil Court of Appeal (hereinafter also the Court of Appeal) in the matter of choosing its powers and answer the following question: does the Court of Appeal have legislative duties and/or should not have them in terms of justifying the choice of its own powers.

#### **The main goals of this work are:**

- As a result of a systematic analysis, to identify the criteria for choosing the powers of the RA Court of Appeal and their features,

- Conduct a legal analysis by defining the existing criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or improperly substantiated or justified.

- Propose new criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or unfounded or justified, which would be more targeted/relevant in each specific case.

- Presentation of broad and narrow interpretations of specific articles of the RA legislation, their disclosure and justification.

- Identification and justification of comments aimed at overcoming legal uncertainty.

#### **Problems of the scientific paper answered the following questions:**

1. What are the existing criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or unfounded or justified? Are the existing criteria sufficient for such an assessment.

2. Is the discretion of the Court of Appeals of the Republic of Armenia absolute in the matter of the selection of powers defined by the Civil Procedure Code of the Republic of Armenia, in the event that a specific power may be applied (there is a legal possibility) in the context of the factual circumstances of the case?

3. Shouldn't the RA Court of Appeals have a legislative duty to justify the choice of its powers to be exercised as a result of the examination of the appeal filed against the judgment defined by the RA Civil Procedure Code and/or does the RA Court of Appeals not currently have such a legislative duty?

**Աննոտация.** В рамках научного исследования делается попытка определить существующие критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или необоснованными или обоснованными, и предложить новые критерии, которые были бы более целенаправленными/локальными в каждом конкретном случае.

А также в этом контексте представить рамки усмотрения гражданского Апелляционного суда РА (далее также Апелляционный суд) в вопросе выбора своих полномочий и ответить на следующий вопрос: не имеет ли Апелляционный суд законодательных обязанностей и/или не должен иметь их в плане обоснования выбора собственных полномочий.

**Основными целями данной работы являются:**

- в результате системного анализа выявить критерии выбора полномочий Апелляционного суда РА и их особенности;
- провести правовой анализ, определив существующие критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или неправильно обоснованными или обоснованными;
- предложить новые критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или необоснованными или обоснованными, которые были бы более целенаправленными/актуальными в каждом конкретном случае;
- представление широких и узких толкований конкретных статей законодательства РА, их раскрытие и обоснование;
- выявление и обоснование комментариев, направленных на преодоление правовой неопределенности.

**Задачи научной статьи – ответить на следующие вопросы:**

1. Каковы существующие критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или необоснованными или обоснованными? Достаточно ли существующих критериев для проведения такой оценки;

2. Является ли усмотрение Апелляционного суда РА абсолютным в вопросе выбора полномочий, подлежащих применению по результатам рассмотрения апелляционной жалобы, поданной против решения, установленного УПК РА, в том случае, когда в контексте фактических обстоятельств дела могут (имеется правовая возможность) быть применены конкретные полномочия;

3. Не должен ли Апелляционный суд РА иметь законодательную обязанность обосновать/аргументировать выбор одной из своих полномочий, подлежащих применению в результате рассмотрения апелляционной жалобы, поданной на решение, установленное УПК РА, и/или не имеет ли в настоящее время Апелляционный суд РА такой законодательной обязанности.

**Բանալի բառեր** - Վերաքննիչ դատարան, լիազորություն, ւարձառարանված, գնահատման չափանիշներ, հիմնավորվածություն:

**Keywords:** Court of Appeals, authority, reasoned, evaluation criteria, validity.

**Ключевые слова:** апелляционный суд, полномочия, аргументировано, критерии оценки, обоснованность.

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

**Նորմատիվ-իրավական**

1. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք,
2. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ Վճռաբեկ

դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով: ՀՀ Վճռաբեկ դատարանի 29.10.2021 թ. թիվ ԱՎԴ/2827/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

3. Սալուժն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ:

4. ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 և ՀՀ Սահմանադրական դատարանի 1 փետրվարի 2022 թ. թիվ ՍԴՈ- 1628 որոշումները:

### **Տեսական գրականություն**

1. Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 268:

2. Гражданское процессуальное право России / Под ред. П.В. Алексия, Н.Д. Амаглобели. - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, 335 էջ, Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова. - М.: «ИНФРА-М», 2008, 268 էջ:

### **Ինտերնետային աղբյուրներ**

1. [www.arlis.am](http://www.arlis.am)
2. [www.datalex.am](http://www.datalex.am)

**Մանուկյան Մ.** - Իրավագիտության մագիստրոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլիասցե՝ [MariamManukyan.Law@gmail.com](mailto:MariamManukyan.Law@gmail.com):

Ներկայացվել է խմբագրություն 15.05.2024 թ., տրվել է գրախոսության 15.05.2024 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, իրավագիտության թեկնածու Գ. Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 16.07.2024 թ.: